ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/322

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2021թ. թիվ 26/26-1/20417-2021 գրությամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 06.12.2021թ. թիվ 19.2/39993-2021 գրության հիման վրա, 13.12.2021թ. թիվ 26/26-1/20417-

2021 գրությամբ նախաձեռնել է «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի նախապատմությունը և փաստերը

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մայիսի 20-ին մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված թիվ «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 11-ին ՀՀ արդարադատության նախարարության և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2» ծածկագրով պայմանագիրը:

Պատվիրատուն «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին ուղղված 02.12.2021թ. գրությամբ մասնակի միակողմանի լուծել է Պայմանգիրը և հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված համակարգչային սարքավորումների մատակարարման պետական գնման թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն առ այսօր չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչներ՝ HP Inc., 14 դույմ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Գնորդը ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծել 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով Պայմանագիրը և գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները:

ՀՀ արդարադատության նախարարությունը նաև նախաձեռնում է Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա/ ենթակետի»:

Ընկերությունը 03.12.2021թ. գրությամբ դիմել է Պատվիրատուն՝ հայտնելով հետևյալը.

«Ընկերությունը հանդիսանում է երկար տարիների մատակարար համակարգիչների, համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի շուկայում: Մասնակցելով զանազան գնումների գործընթացին «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն բարեխիղճ ձևով կատարել է իրեն կողմից ստանձնած պարտավորությունները՝ մասնավորապես միայն 2021թ. ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքել է թվով 5 պայմանգիր, որոնք բոլորը պատշաճ ձևով կատարվել են՝ ներառյալ հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանգրի Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր- Մատակարարման ժամանակացույցի՝ նշված ապրանքների մատակարարումը, բացառությամբ 3-րդ չափաբաժնի: Տեղեկացնում ենք, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չի հրաժարվում իր կողմից ստանձնած պարտավորություններից նաև վերոհիշյալ պայմանգրի մասով: Սակայն «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չունի այլևս ոչ մի հնարավորություն 2021թ. ձեռք բերելու նշված պայմանգրի 3-րդ չափաբաժնի ապրանքատեսակը, քանի որ ողջ աշխարհում տիրող COVID-19 համավարակի առկայությունը խոչընդոտ է հադիսացել որոշ ապրանքների արտադրությանը և պայմանավորված այդ վիճակից որոշ ապրանքներ պարզապես հնարավոր չէ 2021թ. ներմուծել ՀՀ:

Կից Ձեզ են ներկայացնում HP/Էջ Պի/ ապրանքանիշի HP Europe B.V. կազմակերպության պաշտոնական նամակը (կցվում է) ուղղված «ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին, որում հստակ նկարագրված է ապրանքները չմատակարարելու պատճառները..»:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանագրի Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչները՝ HP Inc., 14 դույմ:

Այսպիսով, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չի հրաժարվում իր կողմից ստանձնած պարտավորություններից նաև վերոհիշյալ պայմանագրի մասով: Սակայն «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չունի այլևս ոչ մի հնարավորություն 2021թ. ձեռք բերելու նշված պայմանգրի 3-րդ չափաբաժնի ապրանքատեսակը, քանի որ ողջ աշխարհում տիրող COVID-19 համավարակի առկայությունը խոչընդոտ է հադիսացել որոշ ապրանքների արտադրությանը և պայմանավորված այդ վիճակից ՝որոշ ապրանքներ պարզապես հնարավոր չէ 2021թ. ներմուծել ՀՀ:

Կից Ձեզ ենք ներկայացնում HP/էջ Պի/ ապրանքանիշի HP Europe B.V. կազմակերպության 05.11.2021թ. պաշտոնական նամակը ուղղված «ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին, որում հստակ նկարագրված է ապրանքները չմատակարարելու պատճառները:

HP Europe B.V. կազմակերպության 05.11.2021թ. պաշտոնական նամակի բովանդակությունը վկայում է, որ վերոհիշյալ ապրանքը ՀՀ արդարադատության նախարարությանը չմատակարարելու մեջ բացակայում է «ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի մեղքը, քանի որ HP Europe B.V. կազմակերպությունը հայտնել է, որ չի արտադրելու Պայմանագրով նախատեսված ապրանքը մինչև 2022թ. առաջին կեսը, ինչի պայմաններում «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն ուղղակիորեն զրկվել է այդ ապրանքը մատակարարելու հնարավորությունից:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/322 ընթացակարգի շրջանակներում 16.12.2021թ. ժամը 09:25-ին և 22.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 22.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արդարադատության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.12.2021թ. թիվ 19.2/39993-2021 գրությամբ, ներկայացնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, հայտարարությունները, Ընկերության կողմից ներկայացրած հայտը, թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 պայմանագիրը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը և ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույցը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Նորմա-Պլյուս ՍՊԸ-ն սույն թվականի մայիսի 20-ին մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21 ծածկագրով հայտարարած էլեկտրոնային աճուրդին և 2, 3, 4, 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, Նորմա-Պլյուս ՍՊԸ-ն առ այսօր չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչները՝ HP Inc., 14 դույմ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով, 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծել է 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով Պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/322 ընթացակարգի շրջանակներում 16.12.2021թ. ժամը 09:25-ին և 22.12.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/322 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/322 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արդարադատության նախարարության և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի միջև 11.06.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է

ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված «Դյուրակիր համակագիչներ» գնման առարկայի համար սահմանվել է հետևյալը.

	Ապրանքի				
Հրավերով նախատեսված չ/հ	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
3	հատ	8	ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.10.2021թ.

4. ՀՀ արդարադատության նախարարությունը «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հունիսի 11-ին կնքված համակարգչային սարքավորումների մատակարարման պետական գնման թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, Նորմա-պլյուս ՍՊԸ-ն առ այսօր չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչներ՝ HP Inc., 14 դույմ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Գնորդը ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծել 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով Պայմանագիրը և գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները:

ՀՀ արդարադատության նախարարությունը նաև նախաձեռնում է Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա/ ենթակետի»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2021թ. թիվ 26/26-1/20417-2021 գրությունը, ՀՀ արդարադատության նախարարության 06.12.2021թ. թիվ 19.2/39993-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ի միջև 11.06.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված «Դյուրակիր համակագիչներ» գնման առարկայի համար սահմանվել է հետևյալը.

	Ապրանքի				
Հրավերով նախատեսված չ/հ	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
3	հատ	8	ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.10.2021թ.

ՀՀ արդարադատության նախարարությունը «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ՆՈՐՄԱ-ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հունիսի 11-ին

կնքված համակարգչային սարքավորումների մատակարարման պետական գնման թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, Նորմա-պլյուս ՍՊԸ-ն առ այսօր չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչներ՝ HP Inc., 14 դույմ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Գնորդը ստիպված է պայմանագրով նախատեսված պայմանները ամբողջությամբ չկատարելու հիմքով 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծել 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով Պայմանագիրը և գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորման և պայմանագրի ապահովման գումարները:

ՀՀ արդարադատության նախարարությունը նաև նախաձեռնում է Կատարողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա/ ենթակետի»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>10</u>*** օրից ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ արդարադատության նախարարության միջև 11.06.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմանը՝ այն է՝ «Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունիսի 11-ին կնքված թիվ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/21-2 ծածկագրով պայմանագրի Հավելված N 1 և N 2 Տեխնիկական բնութագիր-Մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումն պետք է իրականացվեր 120 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով չի մատակարարել պայմանագրի 3-րդ չափաբաժնով սահմանված 8 հատ դյուրակիր համակարգիչները՝ HP Inc., 14 դույմ:

Այսպիսով, «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չի հրաժարվում իր կողմից ստանձնած պարտավորություններից նաև վերոհիշյալ պայմանգրի մասով: Սակայն «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ն չունի այլևս ոչ մի հնարավորություն 2021թ. ձեռք բերելու նշված պայմանգրի 3-րդ չափաբաժնի ապրանքատեսակը, քանի որ ողջ աշխարհում տիրող COVID-19 համավարակի առկայությունը խոչընդոտ է հադիսացել որոշ ապրանքների արտադրությանը և պայմանավորված այդ վիճակից՝ որոշ ապրանքներ պարզապես հնարավոր չէ 2021թ. ներմուծել ՀՀ», հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, ***<u>որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին</u>***

<u>կարող կանխատեսել կամ կանխարգելել,</u> այնուամենայնիվ՝ Ընկերությունը վկայակոչել է Պայմանագրի 7-րդ կետը և հայտնել, որ քանի որ ողջ աշխարհում տիրող COVID-19 համավարակի առկայությունը խոչընդոտ է հադիսացել որոշ ապրանքների արտադրությանը և պայմանավորված այդ վիճակից՝ որոշ ապրանքներ պարզապես հնարավոր չէ 2021թ. ներմուծել ՀՀ:

Այսպիսով՝ ինչպես արդեն վերը նշվեց Պայմանագրի 7-րդ կետը հստակ սահմանում է, որ կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, մինչդեռ՝ Պայմանագիրը կնքվել է COVID-19 համավարակի և դրանից ծագած հետևանքների՝ բարդությունների գոյության պայմաններում, և Ընկերությունը պարտավոր էր գնահատել տիրող իրավիճակը, դրանից բխող ռիսկերով հանդերձ և կանխատեսել հնարավոր բարդությունները մինչև Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելը, Պայմանագիրը կնքելն ու դրանով նախատեսված պարտավորությունները ստանձնելը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված գրությանը կից ներկայացված HP Europe B.V. կազմակերպության 05.11.2021թ. անգլերեն լեզվով նամակին, ապա հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, որ պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Նույն օրենք 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրության առարկա չի հանդիսացել անգլերեն լեզվով ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացված փաստաթուղթը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2021թ. թիվ 26/26-1/20417-2021 գրությամբ «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**